

## ԱՒ, ՀԱՆԳԻՍՏ ՏՈՒԷՔ...

(Նիկիտինից)

ԱՒ, հանգիստ տուէք... Հանգիստ եմ խընդրում  
Փոթորկուած մըտքիս, ցաւատանջ կըրծքիս,  
Ո՞ղջ օրն եռում էր իմ շուրջ անդադրում  
Այն ամենն, ինչից խոցուած է հոգիս:

Ո՞ւր փախչել մեծ-մեծ, փըքուն խօսքերից.  
Խօսքով ամենքն են մաքուր, աննախանձ.  
Մե՛նք ճըշմարտութիւն պաշտողներ անբիծ՝  
Պատրաստ ենք անվերջ պաշտելու մեր անձ:

Խըղճմտանք սպանուած, ամօթանք մեռած,  
Խաւարում սնւտն է տիրագլուխ ազատ.  
Ոչ դք չէ ողբում անկեղծ, սըրտաբաց,  
Ոչ դք չէ պատժում չարիքն ու արատ:

Մե՛նք մարտիրոսներ չ'ունինք մեր միջում...  
Չե՛նք պատասխանում փըրկութեան կոչին.  
Արեւից պահում, արեւից փախչում,  
Լոյսից վախում է մեր ըստրուկ հոգին...

Գուցէ օգնմն է ողջ ցաւն ու վրտանդ—  
Ինչ պէտք է թռչնի—ծըլսւմ է, ծաղկում,  
Ինչ պէտք է ծաղկի—կորցնում է երանդ  
Եւ թըշուառ մահով հէգ կեանքը կընքում...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

137

